



ՈՒՐԱՑՈՂԸ

(ՄԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎԿԱՅԻ)



Կալէդը, որ մարգարէի և իւր յարատելաղթութիւնների շնորհիւ «Աստուծոյ սուրբ» համարձակ մականունն էր ստացել, Հռովմէական կայսրութեան ասիական կալուածքների վրայ յարձակուելով արդէն հարիւր երեսուն ասպարէզ առաջ էր գնացել:

Իւր յաղթական ճանապարհի վրայ, որ ներկուած էր քրիստոնեանների արիւնով, Կալէդը ստիպուեց կանգ առնել Դամասկոս քաղաքի առաջ: Այստեղի զօրաց հրամանատարն էր արիասիրտ Թովմասը, Ներակլ կայսեր փեսան. այդ միջոցին քաղաքում ասլրում էին քառասուն հազար քրիստոնեալ լոյներ:

Արդէն եօթը շաբաթ անցել էր, բայց Կալէդը գեռ չէր կարողացել Դամասկոսի պարիսպներին տիրել: Թովմասի ընկէցները ոչնչացրել էին նրա պաշարման աշտարակները և չնալելով, որ նա յաճախ լցնել էր տալիս պատնշների ականները, այսուամենայնիւ յունաց կողմից արձակուած կրակը շարունակ լափում էր

լարդեալ և եղեգնի կապոցները, թէև ամեն մի կապօց նախապէս փաթաթուած էր լինում ուզտի թրջած մարթիով։ Բացի դրանից Թովմասը յաճախ երևում էր պարսպներից գուրս և գիշերային արիւնալի կոիւներով ծանր կորուստներ էր պատճառում քաղաքը պաշարող ներին։

* * *

Մի գիշեր արաբացի գիշերապահների մի խումբ, որ յաճախ թափառում էր պարիսպների շուրջը, մի պատնէշի յետեւը գտաւ երկու թամբած և սանձած հեծնելու պատրաստի ձիեր, առանց ձիաւորների։ Այդ ձիերը հանգիստ կանգնած էին միմեանց կողքի չնմանուելով այն անտէր ձիերին, որոնք հէնց որ չենակ են մնում, սկսում են սանձը բերանում արածել։ Այս ձիերը սպասում էին մէկին։

Սարակինոսներն ալդ ձիերը նկատեցին իբրև մի ցանկալի աւար և ուզում էին տիրանալ նրանց, բայց երկու կենդանիներն էլ ոչոքի մօտ չէին թողնում։ Եթէ նրանց միախ մի մարդ էր մօտենում, աքացում էին, երկուսի կամ երեքի գէմ միասին էին կուռում խփում ու կծում, իսկ եթէ շատերն էին մօտենում, նրանք շրջապատողների միջից անցնելով, աջ ու ձախ էին վագում և ալսպիսով իրենց հալածող արաբացիներին օրինաւոր լոգնեցնելով՝ վերադառնում էին իրենց նախկին տեղերը, պատնէշի յետեւը։

Արաբացիների առաջնորդը դառնալով իւր ընկերակիցներին, կարծիք յայտնեց, թէ ալստեղ մի գաղտնիք պէտք է լինի և թէ ալդ գաղտնիքն իմանալն երկու թամբած ձիերից աւելի մեծ արժէք կունենալ, ուստի պէտք է պարսպի յետեւը թագնուած հսկել, մինչև որ գաղտնիքը բացուի։

Արաբացիները լուռ ու մունջ թագնուեցին ծառերի ու թփերի յետեւը, փոսերի մէջ։ Երբ գերանդիսազէն պահակը արևելեան հորիզոնից իջաւ, մի մարտկոցի աշտարակից յանկարծ հնչեց կարճ սուլոց, որից յետով ձիերից մէկը թողեց իւր ըն-

կերոջը և արշաւեց ալդ մարտկոցի աշտարակի ուղղութեամբ։

Նոյն միջոցին սարակինոսները տեսան, որ մի մարդ աշտարակից պարանով իջնելով՝ հեծաւ ներքեռում պատրաստի կանգնած ու իրեն սպասող ձին և կամաց դէպի պատնէշն արշաւեց։

Դեռ ձիաւորը չէր հասել պատնէշին, երբ երեք հարիւր ձողաչափ հեռաւորութեան վրայ գտնուող երկրորդ մարտկոցի աշտարակից հնչեց կրկնակի սուլոց, որից լետոյ երկրորդ ձին նոյնպէս թողեց իւր տեղը և մօտեցաւ երկրորդ աշտարակին։

Միանակ ձիաւորն ուղիղ ճանապարհով արշաւեց դէպի պատնէշը։

Սարակինոսների առաջնորդը պատուիրեց իւր մարդ կանցը հանգիստ մնալ, ասելով թէ, որովհետեւ երկրորդ աշտարակից իջնող մարդը նոյնպէս այստեղ կգալ, մենք երկու թռչունն էլ մի ցանցով կորսանք։

Բայց նախորդ ձիաւորը զգուշ էր. նա հասնելով պատնէշին, առաջ սկսեց իւր շուրջը զննել, հետազոտեց ամեն մի փոս, ամեն մի անկիւն, որպէս զի տեսնէ, թէ արդեօք ոչ ոք չէ թագնուած այդտեղ։ Զին նրան տարաւ ուղիղ արաբացիների թագնուած տեղը։

Նա վարժ ձիավար լինելով՝ հեշտութեամբ կարող էր փախչել, որովհետեւ պարսպի գուռը շատ մօտ էր և անմտութիւն կլինէր, նթէ արաբացիները մինչեւ այնտեղ հալածէին նրան։ Բայց թէ ինչո՞ւ նա չփախաւ, ինչո՞ւ աւելի լաւ համարեց սուրը հանել և միանակ թշնամու գնդի վրայ լարձակուել և առանց որ և է օգնութեան նրանց հարուածել — այս բոլորը նա ստիպուած կլինի շուտով խոստովանուել կալէդին։

Անվեհեր արիստութիւնը յաղթող չհանդիսացաւ բազմութեան վրայ. երբ ֆանտիկոս արաբացի քաջամարտիկներից մէկը ջարդուած ընկած էր նրա ձիու պալտերի տակ, լանկարծ իր ձեռքի սուրը խրեց ձիու կողքը և ազնիւ կենդանին ընկնելով իր տակը թողեց ձիաւորին։

Խորամանկութեամբ խարուած ասպետը գեռ կըռ-

ւում էր իր թշնամիների հետ, երբ արաբացիները խըմ-
բովին յարձակուելով նրա վրալ, զէնքերը խլեցին և գե-
տին գլորեցին նրան:

Ասպետն իւր երկաթապատ աջով ջարդեց իրեն մօ-
տեցողի երեսը և երկաթեալ սաղաւարտով փշրեց իրեն
գետին գլորող արաբացու գանդը:

Հէնց ալդ միջոցին հասաւ երկրորդ ձիաւորը: Յաղ-
թուած հերոսը լսեց նրա ձիու պայտերի տրոփիւնը և
մի վերջին լուսահատական ջանքով արաբացիների մի-
ջից բարձրացաւ և լունարէն լեզուով բարձր կանչեց.
«Թուչունը բռնուած է»:

Ալդ լսելուն պէս երկրորդ ձիաւորն արագ շրջեց
իր ձիու գլուխը և փախաւ:

Բռնուած ասպետին շղթայեցին:

«Տեսնում ես», հեգնութեամբ ասաց նրան արա-
բացին. «միւս ձիաւոր ընկերդ երկչոտութեամբ դաւա-
ճանեց քեզ»:

Ասպետը հառաչելով պատասխանեց. «ընկերօ, միւս
ասպետը, աղջիկ էր»:

* * *

Կալանաւոր ասպետին տարան կալէդի մօտ. նշա-
նաւոր կալանաւորներին սովորաբար միշտ տանում էին
սարակինուների գլխաւորի մօտ, նրա հետ շափուելու
համար, իսկ աննշանները շափում էին նրա զինուոր-
ների հետ:

Թէ ինչ էր նշանակում այս «շափուիլը» իսկոյն
կիմանաք: Կալէդը ոչ մի կալանաւոր չէր պահում իւր
մօտ, ոչ էլ փրկագին էր վերցնում նրանց համար, այլ
թողնում էր իւր զինուորներին, ալդ կալանաւորների
ոլժերը փորձելու համար տեղի ունեցած ճակատամար-
տից լետու:

Եթէ կալանաւորը յազմւում էր, կալէդը հրամա-
լում էր ազատ թողնել նրան, իւր զօրքերի շարքն էր
դասում նրան և վարձ ու զէնք տալիս, իսկ յաղթող
հանդիսացողներին հրամալում էր խմբովին մօտակալ

գետափը տանել և նրանց արիւնը գետի մէջ թափելուց յետոյ, մարմիններն երեսանց գետնի մէջ թաղել, որով հետև Կալէդը դիւցազն մականունը ստանալիս Մահմէդին խոստումն էր արել՝ իւր յաղթական ճանապարհի վրայ գտնուող բոլոր գետերն անհաւատների արիւնով ներկել:—

«Դու քաջ մարդ ես, յոյն», ասաց Կալէդը Կալանաւոր ասպետին. «իմ տապետները վկայում են ալդ, բայց ալժմ ինձ հետ պէտք է կռուես, կամենում եսա:

Կալէդը բարձրահասակ, զօրեղ, պնդակազմ և առիւծի ոլժ ունեցող մարդ էր, իսկ կալանաւորը կռուի մէջ նուազելով միայն իւր ոլժերը կատարելապէս սպառելուց յետոյ էր միայն ընկնուել, Բայց այնուամենալինիւ պատասխանեց, որ ինքը պատրաստ է Կալէդի հետ կրուելու, որտեղ, երբ և ինչ զէնքով որ նա կամենայ:

«Եղին ասպետ, այս կռուում կեանքի և մահուան խնդիր կորոշուի: Ո՛չ, աւելի ես, յաւիտենական կեանքի և յաւիտենական մահուան: Ամենից սիրով որ զէնքովն ես կռուում, արդեօք նիզակնիւ»

— Այո՞:

«Կամ գուցէ աւելի սիրով սրով կկռուես:»

— Այո՞:

«Կամ գուցէ լախտով:»

— «Թէպէտ ալդ ինձ համար մի փոքր անսովոր բան է, բայց ալդ էլ ընդունում եմ»:

«Եթէ ալդպէս է, մենք կը կռուինք ոչ սրով, ոչ նիզակով և ոչ էլ լախտով, այլ ամենածանը զէնքով—խօսքերով: Ես յարձակում եմ քո հաւատի վրայ, պաշտպանուիրա»:

Ասպետը ժպտաց. հէնց ալդ բանում իրեն զօրեղ էր զգում նա:

«Ուրեմն կռիւն սկսում է. — Դու կամենում էիր փախչել իմ պաշարած Դամասկոս քաղաքից: Դամասկոսի պարիսպները պաշտպանուում են քաջ զինուորներով և որ դու նրանց մէջ վատերից մէկը չես՝ ապացուցանում են իմ զինուորների քեզնից ստացած արիւնոտ վէրքերը:»

Բայց այնուամենալինիւ դու ուզում էիր գիշերով
գաղտնագողի փախչել ալս փառքի ասպարեզից»:

Ասպետը չէր պատասխանում։

«Երկրորդ ասպետը, որ քեզ հետ միասին ուզում
էր փախուստ տալ և որին դու իրախուսեցիր յետ դառ-
նալ, քո ասելով՝ աղջիկ էր։ Եթէ դու ալդ բանը չա-
ռէիր էլ, ես կիմանալի։ Եթէ նա տղամարդ լինէր, կամ
քեզ կազատէր կամ թէ քեզ հետ միասին կըոնուէր»։

**Ասպետը լուռ գլխի շարժումով դրական պատաս-
խան տուեց։**

«Այն աղջիկը, որի հետ ուզում էիր փախչել, քո
սիրելին էր։ Որ դու նրա հետ ուզում էիր փախչել, ա-
պացոյց է, որ նրա ազգականները չեն կամենում նրան
քեզ կնութեան տալ։ Որ դու ստիպուած էիր նրա հետ
փախչել, ապացոյց է, որ նրա ազգականները զօրեզ
մարդիկ են Դամասկոսում։ Եւ որ դու ալս փառքի աս-
պարեզից փախչել ցանկացար, ապացոյց է, որ դու
շատ ես սիրում նրան»։

Կալանաւորը մի խորը հառաչանք արձակեց։

«Ասած ճիշտ է, այնպէս չէ»։

«Իսկապէս դու տեսնում ես պարիսպների միջով և
կարողանում ես սրտի խորքերը թափանցել։ Իրօք այն-
պէս է, ինչպէս որ ասացիր. ինձ մնում է միայն ա-
նուններ աւելացնել։ Այժմ քո առաջը կանգնած կալա-
նաւորը կոչում է ասպետ Եօնաս, իսկ ալն աղջիկը,
որին սիրում եմ, մեր հրամանատար Թովմասի եղբօր
դուստը Եւզոսիան է։ Պատմութեան բանալին հետե-
ւեալն է. Երեսուն օր է արդէն, որ դու պաշարել ես
Դամասկոսը. քաղաքի պարիսպներն արդէն շատ տեղե-
րում վնասուած են։ Բայց քանի որ յարձակումն էիր
գործում, դիմացդ շարունակ երկու անգամ աւելի զե-
նուած մարդիկ էիր գտնում պատնէշների վրալ, քան թէ
սպասում էիր դու՝ հիմնուելով լրտեսներիդ հաղորդած-
ների վրալ։

«Ճիշտ որ ալդպէս էր. մեր ամեն մի յետ մղուած
յարձակումը ողբալի հետևանք էր ունենում լրտեսնե-

րիս համար, որովհետև անողորմաբար կախել էի տալիս նրանց»:

«Ալդպէս էր լինում, որովհետև Թովմասը կանանցն էլ զինուորի հագուստ էր հազցնում և երբ տղամարդ դիկը կուռում էին առաջին շարքերում, նրանց ետեղում կանգնած կանալքն ու օրիորդները թշնամուն վախեցնում էին իրենց թուով և սպառագինութեամբ»:

«Նրանք էլ էին կուռում»:

«Երբ տղամարդիկ կուռում էին, նրանք նրանց տեղն էին բռնում»:

«Անչ սարսափելի միտք. միայն անհաւատները կարող են ալդպիսի միտք լղանալ. միթէ կարելի է կնոջը տղամարդու հետ հաւասարեցնել և արքայութեան ճանապարհը բաց թողնել ալդ երկրային ծաղկի համար։ Դու ալդտեղ ծանօթացաբար ալդ աղջկալ հետ»:

«Այս։ Զեր յարձակման միջոցին երկու աղջիկ էին կանգնած իմ յետեւը։ Երկու թոյլ արարածներ. մէկը մեր զօրապետ Թովմասի աղջիկն էր, իսկ միւսը նրա եղբօր աղջիկը։ Այդ ժամանակ նրանք հէնց նոր էին վանքեց գուրա եկել, ուր մեծացել էին կուսերի հսկողութեան ներքոյ»։

«Այն օրը գու երեք մարդու փոխարէն էիր կըռւում. ալսինքն քո և երկու աղջիկների»։

«Գոնէ դէպի ալդ աղջիկներն ուղղած սըերի հարուածները մարմնիս վրայ էի ընդունում»։

«Եւ հէնց տեղն ու տեղը երկուսն էլ սիրահարուեցան քեզ վրայ։ Երկուսն էլ իրենց սիրոյ նետերը դէպի քեզ ուղղեցին։ Ո՞հ, ես գիտեմ ալդ և ալլես չեմ շարունակում հարցեր տալ. ալդպէս են կանալք. կարո՞ղ են ուրիշ տեսակ լինել. միթէ Ալլահը նրանց ալդ կատարելագործութեամբ չստեղծեց։ Երկուսն էլ սիրով բորբոքուեցին այն ասպետի համար, որ իրանց ներկայութեամբ նրանց համար կուռեց և յաղթեց. ալդ օրը գութէ տղամարդկանց և թէ կանանց հաւասարապէս լաղթեցիր։ Ասե՞մ՝ թէ յետոյ էլ ինչ պատահեց։ Զեր զօրապետ Թովմասը դափնեալ պսակ դրեց զլիսիդ և յախտնեց, որ քեզ ընդունում է իւր որդու տեղ, իսկ գու պատաս-

խանեցիր, որ աւելի սիրով նրա եղածը ողողին կլինիս: Անհաւատները կարող են միայն մէկին սիրել. անհաւատի սրտում չեն կարող երկու կանայք տեղ բռնել: Դու մերժեցիր զօրապետի աղջկալ ձեռքը, բայց եղբօր աղջկանն էլ չստացար: Ալգալէս չէր իրողութիւնը»:

— «Ճիշտ գուշակեցիր», հառաջեց ասպետը և գլուխը կախ գցեց:

Կալէդը շարունակեց իր պատմութիւնը, շեշտելով միմիայն գլխաւոր կէտերը. «Դուք երկուսդ, որ սիրում էիք միմեանց, համաձայնութիւն կայացրիք՝ գաղտնի կերպով քաղաքից փախչելու: Մըքան պէտք է դուք իրար ճանաչէիք, որքան պէտք չ ձեր գաղտնի դաշնակցութեամբ տոգորուած լինէիք, որ մինչև անգամ ձեր ձիերը, որ նշանակեալ ժամին պատնէշի տռաջն էիք կանգնեցրել՝ միաբան էին միմեանց հետ: Բախտը չլաջողեց ձեզ. դու բռնուեցար, իսկ քո սիրելին ստիպուած եղաւ փախչելով որոնել իւր փրկութիւնը: Նրան թոյլ տուփին պարսպի դռնից ներս մտնելու: Հաւանականաբար այնտեղ ճանաչեցին, որ աղջիկ է: Ամենքն իմացան, որ հրամանատարի եղբօր աղջիկը կամեցել է գեշերով փախուստ տալ պաշարուած քաղաքից: Ի՞նչ կլինի քո սիրուհու վիճակը»:

Ասպետ Եօնասը գլուխը կախեց և լրեց:

«Եթէ չես ուզում ասել, ես այդ էլ կգուշակեմ: Եթէ փախչող կուսը մի արաբացի հրամանատարի աղջիկ լինէր, հայրն անմիջապէս կսպանէր նրան և աշխարհիս վրայ մի կտրուած ծաղիկ աւելի պակաս կլինէր, ուրիշ ոչինչ. իսկ դու կարող էիր քեզ համար մի ուրիշ ծաղիկ որոնել: Բայց ձեր օրէնքով կինն էլ հոգի է ընդունւում: Ալդ պատճառով քո սիրուհուն չեն սպանի, բայց գրա փոխարէն չորս մերկ պատերի մէջ կբանատարկեն, ուր ոչ մի ուրախութիւն չկայ և որտեղից ալլես անկարելի է ազատել նրան: Գլուխոգ չի վերցնի, որ նա ալնտեղ թաղուած մնայ, որովհետեւ քեզ լաւ լայտնի կը լինի, որ այդ հանգուցեալը նոյն իսկ գերեզմանի մէջ ապրում, վշտանում, հառաջում, ազատութեան է սպասում և որտեղ որ լինես, քնած թէ զուարճանալիս,

նա քո մասին է մտածում, հիւծում, քեզ համար ողբում: Ի՞նչ ես կարծում, լաւ կլինի ալդպէս»:

— «Ո՛չ», պատասխանեց Եօնաս ասպետը:

Արաբ հրամանատարը վեր թռաւ ուղտի մորթեալ գորգի վրայից, իւր ծանր ձեռքով բռնեց ասպետի ուսը և ասաց.

— «Ուրեան հաւատդ դրժեցիր և յաղթուեցար»:

— «Դեռ ես ոչ», պատասխանեց ասպետը:

— «Կատարելապէս յաղթուած ես, ինքդ թևատարած ընկար իմ սրի վրայ և սուրս խորը խոցեց քո սիրտը»:

Դու մոռացար հագնել զրահդ, ասպետ, երբ, քո խօսքի համաձայն, փախաւ սիրուհիդ, դու կրկնակի կերպով իմ կալանաւորն եղալ: Եթէ դուք ջուխտդ միասին կալանաւորուած իմ առաջը լինէիք, երկուսով միացած, կարող էիք ինձ ծաղրել: Ինչպէս դու, ալնպէս էլ նա կարող էիք ծաղրելով երեսիս ասել. «մենք ոչնչից չենք վախենում. կամենաս սպանել տուր մեզ, կամենաս չարչարիք, կամ մաս մաս արա, մենք մարտիրոսներ կլինինք. միասին մեռնելը մեզ համար հոգեկան զուարճութիւն կլինի: Ուրիշ ինչ ընտրութիւն կմնար ինձ. կամ պէտք է ձեր արիւնով գետի հոսանքը կարմիր ներկել տալի կամ թէ պէտք է հրամայէի երկու ձի տալ ձեզ և ասէի. պահանջէք, սիրեցէք միմեանց»:

Բայց այժմ դու մենակ ես կանգնած քո թշնամու առաջը, որի մարդկանցը սրի վէրքեր ես հասցրել. բայց որովհետեւ ես յարգում եմ իմ քաջ թշնամուն, ուստի և բարեկամական ձեռքս դէպի քեզ եմ մեկնում: Քո բարեկամները և հաւատակիցները, որոնց համար արիւնդ թափեցիր, իրենցից հեռացըին քեզ, գլխիդ անէծքներ են թափում և քո վշտահար սիրուհուն իրանց ձեռքով մտրակում: Եթէ երբ և իցէ դու համբուրել ես նրա սպիտակ ուսերը, դողալով պէտք է մտաբերես այն մեխապատ մտրակների պատճառած սպիները, որ կմնան նրա ձիւնափալլ սպիտակ մարմնի վրայ: Եթէ երբ և իցէ ուրախացրել է քեզ նրա քաղցը ժպիտը, դու պէտք է ատես այն սառը, անողորմ պարիսպները, որոնք նրան անջատում են քեզանից: Եթէ

դունրան սիրում էիր և գեռ ևս սիրում ես, պէտք է սեղմես Կալէդի ձեռքը:

Ասպետ Եօնասի աչքերի առաջ սկսեց ամեն բան կարմրին տալ: Ամեն մի առարկայ արիւնոտ մէզով էր փաթաթուած թւում նրան: — Դառն ատելութիւնը, տանջուած սիրոյ թմրութիւնը հետզհետէ սկսեց տիրանալ նրա սրտին: Երբեմն երեխն նրա բորբոքուած նեարդերը ցնցուամ էին սառը լիշողութիւնից: Նրան թւում էր, որ իբր թէ ի վաղուց հետէ չտեւնուած սրբերի և մարտիրոսների երկար ու անվերջ շարքերն անցնուամ էին նրա հոգեւոր աչքի առաջով, որոնց սկիզբն անյայտանուամ էր աստղերի մէջ, իսկ վերջը դեռ ևս հանգստանուամ գերեզմաններում: Նրան թւում էր, որ իբր թէ լսում է հեռաւոր բարձրութիւնից եկող սաղմուերգութեան հնչիւնները, որ իբր թէ մի անասելի ճաճանչով փայլող գէմք, փշեալ պսակը գլխին, ցած է իշնուամ անտեսանելի և անըմբունելի բարձրութիւնից և նախում նրան, որ իբր թէ մի արագասլաց ոյժ նրա ականջուամ փսփսում: Է. «ամբողջ կեանքն իւր բոլոր զուարձութիւններով յաւիտենականնութեան մի՛ վալը. կեանն է ներկայացնուամ»:

Նա վարանման մէջ էր:

Այդ վայրկեանին մի ձայն հնչեց նրա ականջին: Մի ձայն, որ հազիւ յիսուն տարուց ի վեր յալտնի էր Ասիալի դաշտավայրերում և որ Դամասկոսի անկումից յետոյ յաւիտեանս լոեց: զանգակների զողանջիւնն էր ալդ:

Դամասկոսի սուրբ Բարբարէ վանքի զանգակն էր առաջին անգամ զողանջել արևելքի առասպելներով տոգորուած մթնոլորտի մէջ և ամեն տեղ տարածուող հնչիւններով ցրուել արևելեան կրօնի աղօտ և զիւրայոյգ առասպելական աշխարհի մառախուղը:

Ասպետ Եօնասը ծանը շնչելով լսեց ալդ զողանջուող հնչիւնները և նրա գէմքը գունատուեց:

Կալէդը կնճիւնները հաւաքած զննուամ էր վարանող Եօնասի գէմքը: Այ ձեռքը գեռ ևս մեկնած էր պահել, բայց ձախն արդէն բռնել էր իր սրի դաստակը:

Զանգակների ղողանջիւնն երկրորդ անգամ լսուեց։
Եօնաս ասպետը գեռ ուշագրութեամբ ականջ էր
զնում։ Նրա ամբողջ հոգին թւում էր, թէ խօսում
է այդ զանգի հնչիւնների հետ, ինչպէս այն լրաբերի,
որ աներկբայելի կերպով ճշմարտութիւնն է լայտարա-
րում։

Արդէն երրորդ անգամ լսուեց զանգի ձախնը։

Յանկարծ ասպետի գունատ ալտերը բորբոքուեցին.
արագ մօտեցաւ նա Կալէդին, բռնեց նրա ձեռքը և
սեղմեց ուժգին։

—«Ես քոնն եմ»։

Սուրբ Բարբարէ անուանուած վանքի միակ զան-
գակը միայն այն ժամանակն էր ղողանջում, երբ մի
կոյս աղջիկ յալփտենական կուսութեան խոստումն էր
տալիս այնտեղ։ Իսկ երեք անգամ ընդհատումներով զո-
ղանցելով յայտարարում էր աշխարհին, որ մենաստան
մտած կոյսն իշխանուհի է։

Այս բանն իմացաւ ասպետ Եօնասը զանգահարու-
թիւնից — և վճռեց այսուհետև կոչուիլ ոչ թէ «ասպետ»
Եօնաս, այլ Եօնաս որէդ»։

* * *

Եօնասին յաղթող և կալանաւորող արաբը կոչւում
էր Դերար. սա մի արկածախնդիր մարդ էր, որի հա-
մարձակութիւնը յանդուգն կատաղութեան էր հասնում
և որի մականունն էր «պատերազմների խեղկատակ»։

Երբ Ներակիւս կայսրը վաթսուն հազար զինավարժ-
գօրքով Ալյոնադենի մօտ երևաց՝ Դամասկոսը պաշտրե-
լուց ազատելու համար, զօրախաղի ժամանակ, զօրքի
ընդհանուր հրամանատար Վերդանը, որ նստած էր
հարուստ զարդարանքներով պատաճ ու ձիւնանման
սպիտակ ջորու վրայ, լանկարծ նկատեց, որ իր փայլուն
և շքեղ հետեւորդների մէջ մի օտարական է խառ-
նուել։

Այդ մարդու օտարական լինելն երևում էր ոչ այն-
քան նրա հագուստից, այլ առաւել ևս այն հանգաման-

քեց, որ նա բոլորովին մերկ էր։ Միայն ազգը ների վրայ փաթաթած ունէր մի կարմիր շալ։ Նրա միակ գէնքը նիզակն էր։

Այս մարդը Դերարն էր։

Այդ կատաղի արկածախնդիրն ամբողջ գօրքի դիմացը թշնամու բանակն էր անցել ձիով և երբ սկսել էրն նրա վրայ ուշադրութիւն դարձնել, նա այնքան էր մօտեցել հրամանատարին, որ նիզակի մի հարուածով կարող էր նրան ձիուց ցած գորել։

— «Կենդանի բռնեցէք ալդ յանդուգն մարդուն» կանչեց Վերդանը իւր ուղեկիցներին և երեսուն զրահաւորուած հեծեալներ իսկուն յարձակուեցին ալդ մերկ մարդու վրայ։

Բայց ով կարող էր կենդանի բռնել Դերարին։

Երբ փալլուն հեծեալները սրընթաց առաջ էին արշաւում, Դերարն իւր առանց թամբի, սանձի և զէնքի թեթև ձիով սկսեց նրանց առաջն այս ու այն կողմն ընկնել։ Դէպի իրեն էր գրաւում նրանց աջ ու ձախ կողմից, թողնում էր, որ մօտենան, բայց մի ոստումով կրկին ամենից առաջ էր ընկնում, իրան հետեղներից մէկին թոլլ էր տալիս, որ բաւականաչափ մօտենալ իրեն և յետով, յանկարծ շուռ գալով, արագ հարուածով թամբից ցած գլորում նրան։ Իսկ թշնամու հարուածներն աջ ու ձախ էին օտահում, առանց նրան դիպչելու։ Նա վահանով չէր պաշտպանուում, ալլ ձկան պէս դուրս էր սլքում նրանց ձեռքից և ասեղի ծալրից խոյս տուող մի կաթիլ սնդիմի նման փախչում, այն ինչ նրա նիզակը միշտ հարուածում էր թշնամուն։ Դերարն իւր ձիով անակընկալ կերպով մի կողմնակի թուոյցք էր անում և յետեկից իւր նիզակի ծալրը մըխում մօտովն անցնող հեծեալի ծոճրակը։

Երեմն այնպէս էր ցոյց տալիս, իրը թէ ձիուց ցած է ընկնում, բայց երբ հալածողները հասնում էին, նա իր ձիու կողքից քաշ ընկած՝ կտրում էր թշնամիների շարքը և փախչում։ Տասնեեօթը հակառակորդի, քիչ թէ շատ վիրաւորուած, ձիուց ցած գլորելուց յետով, երբ «պատերազմների խեղկտակը» իր ընկերների

մօտ վերտարձաւ, նրանք հանդիսաւոր բացագանչութիւններով ընդունեցին նրան:

Երբ Կալէդն ալդ լանդուգն ձեռնարկութեան համար խստօրէն հաշիւ պահանջեց նրանից, Դերարը պատասխանեց.

«Ես ուզում էի նոյն իսկ իմ անձի վրայ փորձել, թէ արդեօք ալսօր Ալլահը մի հրաշք կդործէ մեղ համար: Նրանք էին ինձ հետ կուռում, ես միայն պաշտպանում էի»:

Եւ իսկապէս Ալլահը հրաշք գործեց նրանց համար, որովհետեւ ալդ օրուայ երեկոյեան դէմ լունահուովմէական մեծ և ուժեղ զօրաբանակը ցրուած փախուստ տուեց Ալսնադէնի զաշտավլրով՝ հալածուած փոքրաթիւ թշնամուց և ամբողջ բանակը, գրօշները, զէնքերը և պաշտրուած Դամասկոսն աւար թողեց թշնամու ձեռքը:

Այս միւնոյն Դերարն էր, որ կալանաւորեց Եօնաւին:

Երբ Կալէդն ուրացողին ներկայացրեց իր զօրագարներին, Դերարն առաջինն էր, որ ձեռքը մեկնեց նրան՝ չնայելով որ իւր աչքը դեռ ևս կապած էր այն գիշերային կուռի միջոցին՝ Եօնասից ստացած բռունցքների հարուածներից:

Հարուածներ տուող ալդ ձեռքն արժանի էր, որ սեղմուէր մահմեղականի ձեռքով:

«Գալդ բարի, Եօնաս բէգ, ուրախ եմ, որ չժողիքեզ Դամասկոսից փախչելու. քեզնից մի շատ լաջող հարուած ստացալ և դրա փոխարէնը սիրով կուզենալի հատուցանել քեզ: Իմ ցանկացած հատուցումն այն կլինէր, որ քեզ կըկին Դամասկոս տանէի և փախած ուղեկցեդ լանձնէի: Քեզ լայտնի են այն գաղտնի անցքերը, որոնք դէպի պաշտրուած քաղաքն են տանում և գիտես, թէ պարիսպների ո՞ր մասերն աւելի հեշտութեամբ կարելի է կործանել:

«Ալժմ ես քո տրամադրութեան ներքոյ եմ. Հետդ կդամ և, եթէ կամենաս, քեզ հետ միասին կկոււեմ»:

Եօնասը նոյնպէս սեղմեց սարակինոսի ձեռքը:

Երկու ալսպիսի ձեռների փոխադարձ սեղմուիլը
մեծ վտանգ էր սպառնում Դամասկոսին:

Որովհետև եթէ Եօնասը միտք ունենար պաշա-
րուած քաղաքի թոյլ կողմերը մատնելու, Դերարն էլ ա-
րիութիւն կունենար այդ հանգամանքից օգտուելու և
թշնամու ոյժը ոչնչացնելու:

Ալդպէս էր ընկել Բօսրան Դամասկոսի պաշարու-
մից առաջ: Ալդպէս էր Ռօմանոսը մատնել իւր հայրե-
նի քաղաքի գաղտնի ստորերկրեալ ելումուտքը և նոյն-
պէս Դերարն էր առաջնորդել հարիւր յանդուգն զի-
նուորներին դէպի քաղաքի պարիսպները՝ գիշերային
խաւարի միջով:

Եօնաս բէգը գիշերալին յարձակումից յետոյ՝ ժողո-
վուած արաբ զօրավարների և իւր հաւատակից կտա-
նաւորների ներկալութեամբ երդումով ուրացաւ քրիս-
տոնէութիւնը:

Եօնաս բէգը հերոս էր և դարձաւ մատնիչ:

Նա դրժեց իւր հաւատը և երդուեց.

«Ես, Եօնաս բէգս, ժխտում եմ ձեզ հետ ունեցած
իմ բոլոր կապերը թէ այս և թէ միւս աշխարհում. ես
ուրանում եմ խաչեցեալին և նրա բոլոր պաշտոններին:
Ես ընտրում և ընդունում եմ Ալլահին՝ Տէր, Իսլամը՝
կրօն, Մէկկան՝ սուրբ տաճար, մահմեդականներին՝ եղ-
բայր և Մահմեդին՝ մարգարէ, որ ուղարկուեց մեզ ճշշ-
մարիտ ճանապարհի վրայ դնելու և ճշմարիտ հաւատը
բարձրացնելու՝ հակառակ նոցա, որոնք բացի Աստծուց
կուռքեր էլ են պաշտոնաւ:

Եւ այս բոլորը կատարուեց մի գունատ աղջկալ
սիրուն աչքերի համար:

* *

Երբ Դամասկոսի զօրքի հրամանատարը լսեց Եօ-
նասի հաւատուրացութիւնը, գուշակեց, որ իւր քաղա-
քին էլ Բօսրալի ճակատագիրն է սպասում՝ ստորերկրեալ
անցքերի կողմից: Ուրացողն ամենավտանգաւոր թշնամին

է, որովհետև գիտէ իր դրժան հաւատակիցների գաղտնիքները:

Պէտք էր ճակատագրի առաջն առնել: Այն գիշերը, երբ Եօնաս Բէգը Դամասկոսի դռների առաջն եղած հրապարակի վրայ ուրացութեան բոլոր ձեւականութիւններն էր կատարում, պաշարուած քաղաքի հրամանատար Թովմասը Դամասկոսը փայլուն կերպով լուսաւորել տուեց: Աշտարակները և եկեղեցու բոլոր գմբէթները լուսաւորուած էին գունաւոր Բէնգալիան կրակներով և քաղաքի «Կայցան» դռան վրայ ճածանւում էր մի հրակալական խաչ, որի շուրջը խմբուած հոգեսորականութիւնը սրբազան երգեր էր հնչեցնում:

Այդ միջոցին Թովմասը բանալ տուեց քաղաքի դըռները և լուսական զօրքերի գլուխն անցած՝ կէսգիշերալին լուսաւորութեամբ յարձակուեց թշնամու վրայ:

Սարակինուների զօրքը նախապատրաստուած էր այդ յարձակման համար և երկու կողմն էլ հաւասար քաջութեամբ կուում էր պատերազմի դաշտում:

Սուր սրի դէմ էր հարուածում և կոուողներից ոչ մէկն առիթ չուներ իւր հակառակորդից ամաչելու:

Գեներալ Թովմասը հոչակաւոր նետաձիգ էր. նա իր ձիու հետ միասին պաշտպանսւած լինելով անթափանցելի զրահով, կոուկի ամենավտանգաւոր տեղն էր գտնուում և հանդիպած թշնամուն գետին գլորում: Հակառակորդի ոչ ուժեղ ձեւքը և ոչ էլ յանդուգն արիութիւնը չէր կարող օգնել, որովհետև լոյն հրամանատարի նետը հեռուից արգէն թափանցում էր նրա մարմնի մէջ: Եւ եթէ թշնամին նոյն իսկ հսկալ լինէր, ամենաթոյլ նետն անգամ բաւական էր նրան միւս աշխարհըն ուղարկելու:

Ճակատամարտի կատաղի աղաղակների միջոցին «Կայցան» դռան վրայ ճածանուող խաչի մօտից անդադար հնչւում էր սուրբ մարգարանց և կուսերի սրբազան երգերը՝ ի միսիթարութիւն հաւատացեալների և ի սարսափի թշնամիների:

Կոիւր տեսեց մինչև հետևեալ օրուալ ժամի 12-ը՝ Կէսօրին Կալէգը նոր զօրքեր հանեց Թովմասի դէմ,

բայց Եօնասին թուլ չտուեց կռուին մասնակցելու: Նար գիտէր, որ ամենքը նրան էին որոնում և եթէ Եօնասը հարիւր կեանք ունենար, հարիւր նետ բոլորին էլ վերջ կդնէր: Կալէդը նրան մի ուրիշ յանձնարարութիւն պիտի անէր:

Նոր աւելացած զօրքերի առաջնորդն երիտասարդ և պատկառելի դիւցազն Աբան էր, որ բացի իւր գեղեցիկ, հաւատարիմ և արիասիրտ ամուսին Ալմիդալից ոչ մի կին չէր ճանաչում:

Ալմիդան արշաւում էր «սրբազն կռուի» ամեն մի ճակատամարտում իր ամուսնու կողքին: Աբանը ճանաչուած էր իբրև հմուտ նիզակ բանեցնող, իսկ Ալմիդան նրանից յետ չէր մնում իբրև քաջ նետաձիգ:

Այդ երկուսն էլ անմիջապէս յարձակուեցան գեներալ Թովմասի վրայ:

Աբանը կռում էր արծաթեալ զբահ և սաղավարտ, որից շղթաներ էին կախուած: Սրան յիալն մի տեղից կարելի էր վերաւորել, այն է վզից, ուր վերջանում էր զբահը: Եւ մի նետ նրա վզի հէնց ալդտեղը հարուածեց և Աբանն անշնչացած ընկաւ ձիու վրալից:

Ալմիդան տեսաւ նետաձիգ թշնամուն, յետոյ ամուսնու դիակը դրեց իր ձիու վրայ, պատերազմի դաշտից դուրս տարաւ, լուաց, զգեստները հագցրեց իրենց վըրանում, դրկեց, համբուրեց նրա սառը մարմինը և առանց մի կաթիլ արտասուրք թափելու, առանց մի հառաչանք արձակելու, ասաց. «Դու երջանիկ ես, սիրելիս, դու գնացիր այն Աստուծոյ մօտ, որ միացրեց և ալժմ կրկին բաժանեց մեզ միմեանցից: Բայց ես վրէժդ կլուծեմ, որպէս զի ես էլ արժանի լինիմ գնալու ալնտեղ, ուր դու գնացիր»:

Ապա կրկին վերադարձաւ կռուի դաշտը և առաջին արձակած նետով հարուածեց Թովմասի կողքին գնացող դրօշակակրի ձեռքը:

Դրօշը վալր ընկաւ:

Եթոյ արձակեց երկրորդ նետը և հանեց Թովմասի մի տչքը:

Դամասկոսցիների զօրքի շարքերում ընդհանուր

վայնասուն բարձրացաւ, երբ գրօշակակիրն ու հրամանատարն ալդպէս մէկը միւսի լետեկից գետին գլորուեցին: Բայց մի վայրկեանից լետոյ երկուսն էլ նորից վեր կացան:

Թովմասը կապել տուեց աչքը, ինքը բարձրացըեց գրօշը և վիրաւորուած՝ վերջին ճիգը թափելով յարձակուեց թշնամու վրայ և յետ մղեց նրան, մինչեւ որ կալէդի պահեստի զօրքերն օգնութեան հասան: Միայն վրայ հասնող գիշերը կուռին վերջ գրեց:

Կէս գիշերից մինչեւ հետեւալ օրուալ երեկոն տեւող կատաղի կոռուից լետոյ արաբացիները գնացին հանգստանալու: Նրանք կարող էին անկասկած ենթադրել, որ յետ մղուած թշնամին—ուժասպառ քրիստոնեաները և նրանց վիրաւորուած հրամանատարը նոյնպէս ուրախ պիտի լինէին գիշերուալ վրայ հասնելուն, որպէս զի վիրաւորուածների վէրքերը կապեն և զինուորների յոգնած մկանունքներին նոր ոյժ տան:

Կարծում էին, որ նրանք էլ կքնեն:

Բայց յոյները չքննեցին:

Արաբացիների խորը քնի միջոցին, երբ ամեն մի մարդ մեռածի նման է լինում, յանկարծ հնչեց զանգակի ձայնը և պարզ երկնքից խփած կալծակի նման՝ յունաց զօրքը յարձակուեց քնած սարսկինոսների վրայ:

Ալժմ նրանք, նախորդ գիշերուայ պէս, կռուի պատրաստի զօրքերի չէին սպասում: Ալժմ զրահը զրահի, հեծեալը հեծեալի գէմ չէր կռուում, ալ խորը քնից արթնացած կիսամերկ արաբացիները խարխափում էին՝ ցրուած զէնքերը գտնելու համար և ընկնում յոյն հեծելագօրքի ոտների տակ, մինչդեռ սարսափելի մանգալառը հառքերն անգլուխ մնացած մարդկանց բազմութեան միջով անցնելով՝ արեան ծով գարձրին արաբացիների բանտակը: Երկսայրի սրերն էլ իրենց բանն էին տեսնում:

Ալս պատերազմական խորամանկութիւնը ճակատագրական հետեւանք ունեցաւ սարակինոսների համար: Սրանց ամենալաւ զօրքերն առանց գիմադրութեան ընկան ընդհանուր կոտարածում: Գեներալ թովմասը սար-

սափելի կերպով տուժել տուեց իւր աչքի կորուսաբւ
Հաղարաւոր զինուորների թարմ, կարմիր արիւնն այդ
աչքի գինն էր:

«Ո՞վ Ալլահ, որ երբէք չես քնում», աղաղակում էր
Կալէդը յուսահատուած, «անօգնական մի թսղնի քնի
մէջ յարձակման ենթարկուած քո ծառաներին»:

Միայն մի թեթև բրդեալ բաճկոն էր ծածկում
նրա մարմինը և միայն մի սուր էր շարժւում նրա աջ
ձեռքին, երբ Կալէդն իւր անթամբ ձիու վրալ նստած
յարձակուեց կոտորածի ամենասարսափելի տեղը. նրան
հետեւեցին միայն չորս հարիւրի չափ հեծեալ:

Բայց այս փոքրիկ խմբի արած հրաշքները, Աս-
տուծոյ սրի անլաղթերի ձեռքը վերջ դրեց լոյների ա-
ռաջ խաղալուն և մինչդեռ փոքրիկ գունդը կուռում էր
թշնամու ամբողջ բանակի հետ, իմաստուն Աբու Օբայ-
դահը խառնաշփոթ զօրքերը կարգի բերեց, իսկ խելա-
գարի պէս դէս ու դէն ընկնող Դերաբը յարձակուողնե-
րի շարքերը թափանցեց և կէս ժամից յետոյ պատե-
րազմի բախտն արդէն փոխուած էր: Երբ բևեռալին
աստղը հորիզոնին հասաւ, լունաց զօրքը կրկին յետ էր
մղուած Դամասկոսի պարիսպների շրջապատի մէջ: Միայն
ընկեցիկ մեքենաները պատնէշների վրալից ուումբեր
էին արձակում լոյներին հալածող սարտկնոսների վրայ-

Այս անլաջող փորձը պաշարուած քաղաքի վերջին
ճիգն էր:

Թովմասի զօրքերի յաղթուիլը Դամասկոսի կործա-
նումն էր նշանակում:

Երկար պաշտպանուելու համար այլևս պաշար,
իսկ արտգ լաղթելու համար բաւականաչափ ուժեր
չունէին:

Գեներալ Թովմասը գիտէր, որ այլ ևս ոչ մի օր
չպէտք է կորցնել. դաւաճան եօնասը, որ ուրացաւ իւր
հալրենակիցներին, կարող էր մատնել և նրանց:

Նա ամենից եռանգով էր կուռում պարիսպների
պաշտպանութեան համար և այդ պատճառով էլ նրան
յայտնի էին պարիսպների ամենաթոլլ կողմերը: Հետեւ-
եալ գիշերը քաղաքի կողմից հարիւր պատգամաւոր

ամբողջ հոգեսրականութեան հետ միասին հանդիսաւոր արարողութեամբ և եկեղեցական ջահերի լուսով քաղաքի գոնից գուրս գալով մտան սարակինոսների բանակը:

Ազատ երկնքի տակ եպիսկոպոսը մի կարճ աղօթք տաց: — Այդ վերջին աղօթքն էր, որ մի քընտոնեալ քահանայ վերառաքում էր Աստուծուն այդ վայրում:

Այս աղօթքով եպիսկոպոսն աղաչում էր Աստծուն, որ մեղմացնի վայրագ թշնամու սիրտը:

«Աստուծ, առենակարող Աստուծ, աշխարհների ոգին, որ ուրախութեան և խաղաղութեան միջոցին կոիւ և պատերազմ է պատճառում և միայն նրա իմաստութիւնը գիտէ՝ թէ ինչու: Կարող է Սա իւր սեպհական սուրբ, «Աստուծոյ սուրբ» Կալէդին, որին ինքն է պողպատ դարձրել, կրակի մէջ ամրապնդել և արիւնով ներկել, կարող է նրան դիւրաբարոյ, զիջող դարձնել, որպէս զի աղաչանքի և արտասուբէ ազդեցութեամբ նրա սիրտը մեղմանալ:

Աստուծ կարող է այդ անել:

Երբ պատգամաւորներն արաբացիների բանակը հասան, Կալէդը, Աստուծոյ սուրբ, ոչ մի տեղ չերևաց:

Նրան չգտան. նա գաղտնապէս հեռացել էր և ոչ ոքի չէր ասել իւր ուր լինելը. նրա հետ միասին անլայտացել էին ուրացող Եօնասը, Փանատիկոս Դերարը, վրէժինդիր Ալմեդան, բոլորը — որոնք երդուել էին կոտորել Դամասկոսի քրիստոնեաներին, որոնց սիրտը քարացել էր վրէժինդրութիւնից, նախանձից, հոչակուելու ցանկութիւնից և որոնք միայն արեան ծարաւի էին: Այս չորս անձինքն անհետացել էին արաբական բանակից և ոչ ոք տեղեկութիւն չունէր նրանց մասին: Դրանց փոխարէն մնացել էր միայն հրամանատարի օգնական բարեսիրտ Աբու Օբակահը, որ մասնակցում էր Կալէդի արշաւանքին: Սա էլ մնացել էր միմիայն նրա համար, որ Աստուծոյ սրի հարուածած վէրցերը կապէ: Երբ պահապաններն եպիսկոպոսին յայտնեցին Կալէդի բացակայութիւնը և պատգամաւորներին տա-

բան Արու Օբայդահի վրանը, եպիսկոպոսը թեթևացած սրտով արտասանեց.

«Աստուած լսեց մեր աղաչանքը»:

Եւ իսկապէս, նրանց պաղատանքը լսելի եղաւ:

— «Ի՞նչ էք ցանկանում, քրիստոնեաներ», հարցրեց ծերունի Արու Օբայդահն ալեզարդ եպիսկոպոսին:

— «Մեր ցանկութիւնն այն է, որ Աստուծոյ կամքը կատարուի. նրա կամքն էր, որ Դամասկոսը ձեր ձեռքն ընկնի. մենք չենք կարող նրա ամենակարող կամքին հակառակել. քաղաքը ձեզ ենք յանձնում»:

— Ալլահը պահպանի ընկճուածներին. էլ ի՞նչ էք կամենում մեզնից:

— «Ի՞նչ որ գու կտաս մեզ»:

«Ահա մագաղաթը, գրագիրը թող նշանակի. եթէ դու իմ ասածների գէմ բան ունենաս ասելու, գլխով նշան արա և ես ուրիշ տեսակ գրել կտամ»:

Եպիսկոպոսը համաձայնութեան նշան արտայատեց: Աւորեմն այս վայրկեանից սկսած դադարում են բոլոր թշնամական լարաբերութիւնները Դամասկոսի բնակիչների և պաշտպող զօրքի մէջ»:

Եպիսկոպոսը համաձայնուեց:

— «Կայցան գուռը հոգեորականների ձեռքով պէտք է բացուի և արաբացի զօրքերի պահպանութեան յանձնուի»:

— «Դամասկոսում ապրող քրիստոնեաներին կրօնի ազատութիւն պէտք է տրուի և ոչ ոք չպէտք է ստիպէ նրանց դրժել իրանց հաւատը: Բնակիչներից իւրաքանչիւրը թող սեպհականէ այն հողն ու տեղը, որին տիբերել էր մինչև այսօր և բացի Խալիֆին տրուելիք համեմատական հարկից, ոչ ոք իրաւունք չպէտք է ունենալ մաքս կամ տուրք նշանակել»:

Եպիսկոպոսը գլխով արեց՝ ի նշան համաձայնութեան:

— «Թուք կարող էք անարգել լաճախել ձեր եօթնեկեղեցները»:

Եպիսկոպոսի աչքերը արտասուքով լցուեցան:

— «Իսկ նրանք, որոնք չեն կամենալ Խալիֆի իշխանութեանը հպատակել ու կցանկանան տուն և հայ-

քենիք թողնելով առաւելութիւն տալ անորոշ վիճակին և պատուաւոր աղքատութեան, կամ թէ չեն կարող յաղթող թշնամու ներկալութեամբ այստեղ ապրել— կարող են ազատ կերպով հեռանալ այստեղից:

Եպիսկոպոսը հեկեկաց. ինքն էլ ալդպիսիների ժուին էր պատկանում:

— «Բոլոր իրենց զէնքերով, ձիերով և դրօշներով»:

Այս արդէն Դամասկոսիների սպասածից աւելի էր: «Եւ իրանց կալքից ու կալուածքից կարող են նրանք այնքան վերցնել, որչափ կարող են հետները տաներու:

Պատգամաւորները համբուրեցին ծերունի թշնամու ձեռքը:

— «Դոհ էք իմ պայմաններից»:

— «Միթէ կարող էինք աւելի պահանջել»:

— «Ուրեմն այս դաշնադրութիւնը ստորագրենք և կնքենք մեր կնիքներով, որպէս զի հաստատուի»:

Այս վաւերաթուղթը տեղն ու տեղը ստորագրուեց, կնքուեց և լոյներն ու սարակինոսները դաշնադրութեան մի մի օրինակ վերցրին:

— «Այժմ փոխադարձ պատանդներ տանք միմեանց, որպէս զի մեզնից ոչ մէկը դաշնադրութիւնը չխախտէ: Ձեզնից ովկ է կամենում իբրև պատանդ մնալ այստեղն»:

— «Ես ինքս կմնամ», ասաց ծերունի եպիսկոպոսը:

— «Այդ գէպքում ես էլ, իբրև պատանդ, կերթամ ձեղ մօտ», ասաց Աբու Օբայդահը և մինչ դեռ եպիսկոպոսն իւր երեք ընկերներով հրամանատարի վրանում մնաց, Աբու Օբայդահն երեք իմամների և Դամասկոսցի պատգամաւորների հետ անձամբ գնաց քաղաք՝ ձիթենու ճիւղը ձեռքին բռնած:

Բայց ո՞րտեղ էր Կալէդը խաղաղութեան դաշնադրութիւնը կապելու միջոցին: Աստուծոյ սուրն ուր էր անլայտացել երկրի երեսից, երբ գիշերալին մթութեան մէջ խաղաղութեան ձիթենու ճիւղն էր ծաղկում:

Կալէդն ալդ միջոցին ճիշտ որ երկրի երեսին չէր գտնւում, ալլ գետնի տակ. նրա հետ էին և քրիստո-

նեաների ամենասարսափելի թշնամիները, Դերաբը և
և ուրացող Եօնասը:

Եօնասը մատնել էր նրանց այն գաղտնի ստորերկ-
րեայ անցքը, որ պարիսպների տակից սկսուելով՝ հաս-
նում էր մինչև աշտարակի գետնափոր կամարների տակ:

Մի քանի հարիւր մերկացրած սրերով զինուած
արիասիրտ սարտկինոսներ հետները վերցրած՝ անցան
նրանք ստորերկրեալ ճանապարհը և գիշերուալ խաղա-
ղութեան միջոցին յարձակուեցին աշտարակի քնած պա-
հապանների վրայ. կոտորեցին բոլոր զիմադրողներին և
լետոյ պարսպի դռները բաց արին դուրսը թագնուած
սարակինոսների դռների առաջ: Որովհետև կոռուղները
լոգնել էին և քաղաքն էլ անձնատուր էր եղել. ընդ-
հանուր հանգստութիւն էր տիրում քաղաքում: Ալիս
ոչ ոք չէր սպասում, որ կոփւը շարունակուի. պաշա-
րուածները ալաշարողներին հնազանդութիւն առաջար-
կելով՝ այլ ևս զէնքը ձեռին չէին հսկում: Ընկեցները
քնած էին իրենց քարընկեց մեքենաների մօտ և պա-
տերազմող քաղաքացին, որ թշնամուն սարսափեցնելու
համար, իւր կնոջ հետ միասին, զինուորի զգեստ հազած
պատնէշների վրայ էր կանգնած՝ խաղաղութեան լար-
տարարութիւնից լետոյ վերագարձաւ տուն, հանեց զի-
նուորական զգեստը և հանգստացաւ իւր կնոջ կողքին:

Այս խորը քնի միջոցին էր, որ Կալեդն իւր ա-
րիւնարբու գնդերի հետ ոտք կոխեց Դամասկոսի փո-
ղոցները:

Սկզբի երկիւղի միջոցին քաղաքի փողոցները լցուե-
ցան փախչող ամբոխով. անզէն և մերկ մարդիկ վա-
զում էին գէպի վաճառանոցի հրապարակը. իսկ լուն
զօրքերի գեռ ևս զինուած գնդերի մէջ էլ սարսափ էր
տիրում:

Ներս խռնուող արաբացի պատերազմողների ճա-
նապարհը ոչ ոք չէր խափանում:

Ով կամենար սպանել, կարող էր սպանել:

Ով կամենար լափշտակել, կարող էր լափշտակել.
իսկ ընդհանուր հրդեհը լետաձգեցին, որ վերջն անեն-

Եօնաս բէգը Կալէդի զօրքերն առաջնորդեց դէպի մենաստանը:

Այն սարստիքը, որ ամբոխին դէպի փողոցներն էր առաջ մղում, այն կոյր լուսահատութիւնը, որով անգէն մարդիկ իրենց մերկ մարմիններով ուզում էին զինուած լարձակուողների առաջն առնել, բազմաթիւ համարձակ մարդկանց կատաղի գիմադրութիւնը, ձիաւորի ասպանդակներին փաթաթուող մայրերի խելագար աղաղակները—այս բոլորն ապացուց էր, որ Եօնաս բէգը ճիշտ նպատակին էր դիմում:

Մենաստանը քաղաքի գանձարանն էր. ալդտեղ էր ժողովուած բոլոր ոսկին և թանկագին քարերը և—որ ամենից թանկագինն էր—ալդտեղ էին գտնւում քաղաքի կոստ աղջկները, որոնց մէջ էր նաև Եւդոկսիան:

Ամենքին յալտնի էր, որ ալդ մենաստանին տիրելու համար մի կատաղի, լուսահատ կոիւ պիտի տեղի ունենար:

Եօնասն իւր հայրենակիցների արեան միջովն այնպէս էր քայլում, որ կարծես լճակի տղմի միջովն անցնելիս լինէր:

Իւր սրով ճեղքած գլուխներից շատերին անձամբ ճանաչում էր. շատերը նրա սրի հարուածն ընդունելուց լետոյ նրա անունն էին տալիս, բայց Եօնասը ոչ ոքին չէր խնալում: Նրա հոգեկան աչքերի առաջ մի-այն Եւդոկսիայի պատկերն էր նկարում:

Կալէդը չէր կարողանում առաջ գնացողներին հասնել, Դերաը նոյնպէս լետ էր մնում նրանցից: Եօնասը միշտ իւր խմբից նիզակ ձգելու տարածութեան չափ տեղ առաջ էր գնում. նա էր ամենքի համար ճանապարհ հարթում, նա էր մահաբեր սուրը հետզհետէ աւելի խորը թափանցում իւր հայրենիքի սիրտը, մինչև որ վերջապէս նրա սրի ծայրն եկեղեցու դռանը դէմ առաւ:

Ամենքը, որոնք մենաստանի գռներն ուզում էին պաշտպանել, թէ երիտասարդ, թէ ծեր, թէ ծանօթ և թէ զինակից, մէկը միւսի լետեկից ընկան Եօնասի սրի հարուածներից: Նրա սուրը, կարծես թէ հմայուած էր.

Նրա ամեն մի հարուածը նպատակին էր հասնում։
Եօնասն արբել էր իւր հայրենակիցների արիւնով.
Նա մոլեգնել էր, «Եթէ Աստուած նոյն իսկ իւր հրեշտակներից մէկին ցած ուղարկէ ալս դռները պահպանելու, ես դարձեալ կխորտակեմ», աղաղակեց նա պարծանքով և իւր երկաժի ձեռքով դռան փականքը բըռնեց, ցնցեց, դուրս գչլեց և բացեց, բայց ապշած երերաց շէմքի վրայ։ Ո՞չ թէ Աստծու հրեշտակապետն էր կանգնած նրա առաջ, առ Աբու-Օբայդահ։—մեծ վեզիրը։

— «Ժպիկրհ», աղաղակեց մեծ զօրավարը, «Բնչպէս ես համարձակւում զէնքը ձեռքիդ յարձակուել մի քաղաքի վրայ, որ աւդէն Ալլահի մարգարէների պահպանութեան ներքոյ է գտնւում։ Քո գլխին գայ այն արիւնը, որ դու թափեցիր ալս խաղաղութեան գիշերը և դու էլ ընկղմուես ալդ արեան մէջ»։

Ալս խօսքերը լսելով Եօնաս Բէգը գլխին փալտի հարուած ստացողի պէս ծունկ չոքեց և անզգալ ընկաւ մենաստանի դռների առաջ։

Մենաստանուս հնչեց ութ հարիւր լիսուն կոլսերի ջերմեռանդ երգեցողութիւնը՝ նման միւս տշխարհից հնչող ներդաշնակութեան, որ երկինքը խնդրում է՝ ալս աշխարհում կատարուած սարսափելի գործերը ներելու համար։

Այդ միջոցին վրայ հասաւ և Կալէդը։

Արիւն էր կաթում նրա սրից ու թեկերից, արիւն հոսեց նուե նրա բերանից, երբ տեսաւ Աբու-Օբայդահին, ստորագրուած դաշնադրութիւնը ձեռքին։

«Ողորմութեան չեն արժանանայ Ալլահի թշնամիները, կատաղած և վրփուրը բերանին գոռում էր նա։ Ամահ այն ամենին, որոնց երակներում արիւն է հոսում»։

«Զափաւորիր եռանդդ, Կալէդ», ասաց ժիր հրամանատարը, «արիւն թափելու ժամերն արդէն անցել են, այժմ խաղաղութիւն է տիրում։ Ալլահը քաղաքը մեր ձեռքը մատնեց և հաւատացեալներին աղատեց կռուի հոգսերից»։

«Ալդ ճիշտ չէ, ճիշտ չէ», կատաղած գոռում էր հրեշը: «Ալլահը նրա արիւնն ինձ տուեց: Ես յարձակում մով վերցրի քաղաքը և սուրը ձեռիս անցալ քաղաքի գոներով»:

«Իսկ ես քեզնից առաջ եկալ ստորագրուած դաշնադրութիւնը ձեռքիս, ինքնակամ կերպով բացուած դըռներով»:

«Մի հակառակիր ինձ, ես կսպանեմ նրան, ով կը համարձակուի իմ առաջը կտրել և անհաւատներին պաշտպանել»:

«Եթէ ալդպէս է, առաջ ուրեմն խրիլ սուրդ ալսդաշնադրութեան մէջ, որի վրայ գրուած է Աստուծոյ անունը», ասաց Աբու-Օբայդահը և երկու ձեռքով բըռնեց նրա առաջ լայն մագաղաթը, որի վրայ ամենից վերեւը ոսկի տառերով փալլում էր Աստուծոյ անունը:

Կալէդը տեսներով ալդ հակառակութիւնը, ձեռքի սուրը կատաղութեամբ ուժգին կերպով խփեց հատքարի սիւներին:

Մենաստանի գունով դուրս եկան տասներկու իմամներ, զրջապատեցին Կալէդին ու Աբու-Օբայդահին և աշխատում էին հանգստացնել աղմկարար պատերազմողներին մեղմացուցիչ խօսքերով:

«Թող մարդարէն իւր բոլոր վրէժխնդրութեան հրեշտակներով յարձակուի քո անիծեալ լոյների վրար, անիծում էր Աստուծոյ սուրը: «Աստեղ խաղաղութեան դաշնադրութիւն են կապում ձախ ձեռքով, մինչդեռ աջով թշնամու բողազներն են կտրում: Յոյց տուր դաշնադրութիւնը. կամենամ՝ կկատարեմ, չեմ կամենալ՝ չեմ կատարի»:

«Ալլահն է պահպանում ինձ էլ, քեզ էլ, թշնամուն էլ և եթէ նա չկամենալ, ամեն մէկս շան նման կսատկենք: Ես խաղաղութեան դաշն կապեցի, դու չես կարող քանդել»:

«Լաւ, ասաց Կալէդը և իւր սուրը միսեց պատեանի մէջ: Ես ալլաս չեմ կռուի, բայց փորձիր կանգնեցնել փողոցներում ցըռուած յարձակումն գործողներին, փորձիր համողելու նրանց, որ չսպանեն և չլափշտակեն»:

«Այդ արդեն արել եմ», ասաց Աբու-Օբայդահն անդրդուելի հանգստութեամբ»:

«Երկրորդ դռնով, որ այս գիշեր լանձնուեց մեզ, մեր անձնապահ գունդը գնաց քաղաքը պաշտպանելու և այդ վայրկեանից ամեն մի փողոցում քո խմբերը կը-պատահեն նոլնիսկ մեր զօրքերին, որոնք նրանց կռուից յետ կկանգնեցնեն»:

Կալէդը չեր ուզում իւր ընկերոջ խօսքերին հաւատալ, բայց այդ միջոցին վաճառանոցի կողմից աղմուկով եկող արաբացիների խումբը լուր բերեց՝ թէ ալևս անկարելի է առաջ գնալ, որովհետև բոլոր փողոցները բռնուած են Աբու-Օբայդահի թիկնապահներով:

«Տես, Կալէդ», ասաց ծերունին հանգարտութեամբ, «Եթէ դու Ալլահի սուրն ես, ես էլ Ալլահի Վահանն եմ և զուր տեղը կկառուես նրա դէմ, դու կարող ես միայն մի անլաջող հարուած տալ, բայց Վահանը ծակել չես կարող»:

Կալէդը գարձեալ հանգստացաւ և խելքը գլուխն եկաւ ալդպիսի վայրկեաններումն էր նա իւր չարա-նիւթ ծրագրները կազմում:

«Եկ, գնանք վանքի բակը, թող մեր մարդիկը վկայ ըլինին մեր անմիաբանութեան»:

Կալէդը, Աբու-Օբայդահը և իմամներն անմիջապէս ներս մտան բաց դռնով:

«Խնդրեմ կարդա՛ դաշնադրութիւնը», ասաց ալս-տեղ Կալէդն իւր ընկերակցին:

«Ինձնից հեռու կանգնիր և ալդ թուղթն ինձ չը-տաս կարդալու, որովհետև կարող է պատահել, որ պա-տառեմ ու ալդպիսով խալտառակեմ թէ ինձ և թէ քեզ: Կարդա՛, լսում եմ: Ես կարծում եմ, որ դու լաւ պա-մաններ առաջարկած կլինես և չեմ սխալուի, եթէ ա-սեմ, որ մկներին ազատ թողնելուց առաջ՝ նրանց ա-տամները հանած կլինես»:

Աբու-Օբայդահն սկսեց առանձին առանձին կէտե-ըը կարդալ:

Կալէդի կատաղութիւնն աւելի ու աւելի սաստկա-նում էր:

Ամեն մի առանձին կէտը կարդալիս նա այնպիսի բարձր ձախով էր սկսում ծիծաղել, որ նրա ծիծաղի ձախն եկեղեցու ներսը թափանցելով՝ խառնում էր կորսերի սրբազն երգեցողութեան հետ:

«Ալդ էլ, հող ու երկիր էլ պիտի ունենան: Ալդ անհաւատները, ապստամբները զեռ էլի 7-ը եկեղեցի պիտի ունենան, ուր կարող պիտի լինին Ալլահին անիծել. Օրակահ, դու խելագարուել էիր, ինչ է. գեշեք էր և դու քնից զարթելով՝ երևի չես իմացել, թէ ինչ ես ստորագրել...»

Ամենից լաւը հետևեալն էր:

«Եւ ով որ չի կամենալ քաղաքում մնալ, կարող է անարգել իւր հարստութեամբ, ձիերով և զէնքերով գնալ»:

Կալէդը կատաղի վագրի նման լարձակուեց վաւերագրի վրայ և անպատճառ կպատառութէր ալդ, եթէ իմամներն այս ու այն կողմից նրա վրայ թափուելով լետ չմղէին նրան:

«Թող Ալլահի կալծակները շանթեն ինձ, եթէ ես համաձայնեմ, սպիտակամորուս ծեր խենթ, ուզում ես երեսիս թքել. ես յաղթեմ թշնամուն և դու թոյլ տաս, որ նա իւր զէնքերով քաղաքից դուրս գնալ, այն էլ զէնքերը, ձիերը և գանձերն ու դրօշը հետը տանելնիվ»:

Արու Օրակահը հանդարտ ծալեց թուղթը և գօտիի մէջ դրեց:

«Ինչ որ ես գրել եմ, գրուած է. ինչ որ ասել եմ, կատարեմ»:

Ծերունի դօրավարի այս վեհ վարմունքը բարձրացրեց նրան բիրտ պատերազմող Կալէդից. այս իմաստուն և հանդարտ մարդու առաջ Կալէդը ստորացաւ իբրև մի սովորական աւազակ: Եւ նա այս բանը շատ լաւ էր զգում:

Երբ Կալէդը հասկացաւ, որ իւր կատաղութեամբ ոչինչ չի կարող անել, ալլ միայն իւր հեղինակութեանը կլինասէ, դադարեց զարանալուց, բայց իւր բարկութիւնը թափեց՝ քըթմնջալով չնչին բաների մասին:

«Եաւ, ուրեմն ինչ որ գրուած է, գրուած է. անհաւատները կարող են քաղաքից դուրս գնալ դէպի դաշտավալը՝ Դաշնադրութեան մէջ ասուած է. «իւրաքանչիւր ոք կարող է իւր զէնքերը հետը վերցներ, ես թոյլ կտամ միտին մի զէնք վերցնել, մի նետ, մի սուր կամ մի տէգ. ով ինչ ուզում է, թոյլ այն ընտրէ:»

Աբու Օբայդահն ուսերը շարժեց. — «Ծոյդ քո ասածը լինի, եթէ ալդպէս ես ցանկանում:»

«Նրանք միտին Դամասկոսի ստհմանից կարող են ազատ դուրս գնալ—լետոյ արդէն իմ գործը կը լինի, թէ ինչպէս կհասնեմ նրանց լետելից:— Այդ բանը մեծ աշխատանք կպատճառէ քեզ. եթէ համբերութիւն ունենալիր մինչև վերջը լսելու, կիմանալիր, որ գաշնագիրը հեռացողներին իրաւունք է տալիս երեք օր առաջ գնալու և ալդ երեք օրուալ ընթացքում մեզնից ոչ ոք իրաւունք չունի նրանց հալածելու:»

Քիչ էր մնում, որ Կալէդը կատաղութիւնից լաց լինէր:

«Իսկապէս դու շնտ լաւ ես հոգացել նրանց համար, Օբայդահ. ամեն բարիքով լցրել ես դրանց. բազմաթիւ քաջ և հաւատացող մուսուլմաններին նրանք ժամանակից առաջ դրախտն են ուղարկել և Մահմադը նրանց երջանիկ ճանապարհորդութեան համար այնքան չէ հոգացել, որքան դու՝ նրանց սպանողների համարւ

Դարձեալ մի բան. քո գաշնագիրի մէջ գրուած է, որ նրանք կարող են իրենց գանձերը հետները վերցնել. ուկի, պատուական քարեր, մարգարիտ և թանկագինզգեստներ այնքան, որքան որ կարող են հետները տանել: Բայց թոյ անիծուած լինի բերանս դրած ամեն մի պատառը, եթէ ես թոյլ տամ նրանց, որ մի փշրանք հաց գոնէ հետները վերցնեն, որովհետև դաշնագրի մէջ ալդ մասին ոչինչ չէ ասուած:»

Այս խօսքերն ասելու ժամանակ Կալէդը հեգնութեամբ ծիծաղեց, բայց Աբու Օբայդահի վրայ ոչ մի փոփոխութիւն չարտայալուեց:

«Դու սխալում ես, Կալէդ. մարգարէի պատմութեան մէջ գրուած է, որ ելք Մահմեդն իրեն հալա-

ծողների ձեռքից փախչում էր, մի ալրի կին անապատում տուեց նրան իր ունեցած վերջին պատառը և այս հացի կտորը Մահմեդի ամենամեծ գանձն էր բոլոր երկրային ստացուածքների մէջ։ Ուրեմն հացն էլ մի գոսնձ է — ալդպէս է գրուած։

Կալէդի դէմքն ալլալլում էր կատաղութիւնից։

«Այնուամենալինիւ ես կոչնչացնեմ նրանց, մըրթմթաց Կալէդը՝ բարկութիւնից խեղդուած ձայնով և հեռացաւ Աբու Օբայդահից։

«Վանքի կոյսերի երգեցողութիւնը հետևեալ վայրկեանին փոխուեց՝ Աստուծոյ մեծութիւնը և ամենակարողութիւնը փառաբանող մաղթանքի։

Ալգահիսով Դամասկոսն աւերումից ազատուեց։

Դամասկոսի բնակիչներն ազատուած էին։ Ով կամենար ապրել, կարող էր ապրել և իր կեանքը վայելել։

Բայց այն քաջերը, որ պաշտպանել էին Դամասկոսի պարիսպները, այն կանալք, որոնց ամուսինները քաղաքի համար կոռւելով մահցել էին, այն կոյսերը, որ իրենց նուիրել էին Աստուծուն — սոքա բոլորն ազատութեան թշուառութիւնը գերադասեցին ստրկութեան բարեկեցութիւնից։

Քաղաքի առաջն եղող ազատ դաշտի վրայ հաւաքուեցան, վերջին գրօշի տակ, այն փոքրաթիւ հաւատարիմները, որոնք ցայժմեան հրամանատար Թովմասի հետ էին մնացել. այն հոգևորականների, պատուաւոր քաղաքացիների, կանանց, երեխալոց և վանքի կոյսերի հետ, որոնք ցանկանում էին նրանց հետ գնալ։

Աբու-Օբայդահի թիկնապահները բաժանում էին նրանց սարակինուսների մնացած զօրքից։ Նրանք ձի հեծան և սրբազն երգեր հնչեցնելով իրենց հալրենի քաղաքին հրաժեշտ տուին։

Ուրացողը տեսաւ նրանց իր մօտով անցնելը. նա նկատեց, որ հպարտ վճռական հայեացքները համարձակ իրան էին նախում և լաղթուածների այս տեսարանը սարսուռ էր ազդում նրա վրայ։

Դրանց հետևեց վանքի կոյսերի երկար շարքը, որ սպիտակ հագնուած, արմաւենու ճիւղերը ձեռքերին,
ՀՈՒՄՍՑ Բ.

զորիների վրայ նստած, երգելով տնցնում էին:

Աղյ երգն ուրացողի սիրտը դող զցեց, բայց երբ նա կոլսերի մէջ նկատեց իւր սիրեցեալի դէմքը, նրա կիրքը բորբոքուեց և խղճմտանքի ձայնը լուեց:

«Եւդոկսիա», աղաղակեց նա վշտալի և յուզուած ձայնով:

Կոյսն իւր աղօթագրքից չհեռացրեց հալեացքը:

«Եւդոկսիա, ես այստեր եմ, Եօնասը»:

Կոյսն անցաւ նրա մօտով առանց մի հալեացքի արժանացնելու նրան:

Ուրացողի աչքերից արտասուքներ ցայտեցին. ալս արտասուքը կատաղութեան և ցաւի արիւնն էր:

Եւդոկսիան պէտք է լինէր այն վարձատրութիւնը, որի համար նա իւր հաւատն ուրացաւ. այն մրցանակը, որի համար հայրենիքին դաւաճանեց և որի պատճառով իր եղբայրների արիւնի մէջ լողաց, բայց ալժմ, այն վալրկեանին, երբ արդէն լաղթանակն իրենն է՝ տեսնում է Եւդոկսիային իր առաջովն անցնելիս՝ նման այն երազալին պատկերին, որին ասում ենք. «ալժմ դու իմն ես» և իսկոյն քնից զարթում:

Կալէդը նկատեց Եօնասի արցունքը:

«Դու լալի՞ս ես», ասաց նրան, «լաց եղիր, ալդ շատ լաւ է քեզ համար»:

Քաղաքից գնացող քրիստոնեաների երգը հնչում էր դեռ հեռութից. Եօնաս Բէգը նայում էր նրանց աշտարակի ծալրից, քանի որ երևում էին, իսկ երբ անյատացան նրա աչքից, նրա արտասուքը դեռ չէր ցամաքել:

«Լաց եղիր, ալդ շատ լաւ է», ասաց Կալէդը, երբ պատահեց նրան:

Հետեւեալ օրն էլ Կալէդը Եօնասին տարաւ պարիսալ-ների ծալրը, որտեղից նա արտասուալի աչքերով դէպի այն կողմն էր նայում, որ կողմից անյատացել էր իւր սիրելին:

Դեռ այսօր էլ կարող ես լալ, նկատեց Կալէդը: Եղրորդ օրը նոյնպէս Կալէդը հաճութիւն տուեց իւր ընկերոջ վշտին, բայց չորրորդ օրուայ առաւօտը կա-

նուի զօրքը գէնքի կանչելու աղմկարար նշանը տուեց և իմացրեց Աբու-Օբալդահին, որ ինքը մտադիր է չորս հազար հեծեալներով փախստականների յետևից ընկնել:

Տերունի զօրավարը գլուխը շարժեց:

Իու երեխայ չես, Կալէդ, որ երեակալութեանդ ետևից ընկնելով՝ արեք Հորիզօնից ցած բերես: Դու գիտես, որ փախստականներն երեք օրուայ ճանապարհ առաջ են գնացել և դու որքան արագ էլ նրանց յետեւից ընկնես, նրանք էլ առ սակաւն նոյնպիսի արագութեամբ առաջ կերթան: Անկարելի է, որ կարողանաս նրանց հասներ: Նոյն իսկ նրանց հետքն անգամ գժուարութեամբ կդտնես: Լիբանանի անտառը մտնելիս՝ կկորցնես նրանց հետքը և ստիպուած կլինիս անյալութեան մէջ թափառելու և երբ վերջապէս հանդիպես նրանց, նրանք կապակինեն մեր թշնամու քաղաքներից մինը, որի գոները դու միայն արտաքուստ կդիտես և դեռ ուրախ էլ կլինես, եթէ մի որևէ կերպով կարողանաս ազատուել ամեն կողմից քեզ վրայ թափուող թշնամու բազմութիւնից:

«Անհոգ եղէք», պատասխանեց Կալէդը, «իսօսքս խօսք է, իսկ խոստացածս ես միշտ կատարում եմ: Դու խոստացար անհաւատներին ազատել և խօսքդ կատարելով ազատեցիր նրանց: Ես էլ ուխտեցի նրանց ջնջել և նոյնպէս կկատարեմ խօսքս»:

Ալդ ասելուց յետոյ՝ Դերարին կանչեց իր մօտ և ասաց. «ընտրիր մեր հեծելազօքից չորս հազար մարդ, որոնք յալտնի են իբրև ամենահամարձակներ, կուռի մէջ ամենաաներկիւզներ, աշխատանքի ու ջանքի վերաբերմամբ ամենատոկուններ և ամենից շատ սովին գիմացողներ: Դւրաքանչիւրը թող վերցնի մի սուր, մի նիզակ և մի քսակ ոլոր, որ ճանապարհին չքաղցի: Ես ինքս էլ կգամ ձեզ հետ, իբրև հասարակ զինուար, որովհետև այս անգամ Եօնաս բէգը կլինի մեր առաջնորդը: Մենք փախստականների յետևից կընկնենք»:

Դերարը նոյնպէս գլուխը շարժեց:

«Քուցէ կասկածում ես»:

— Ալդ անկարելի է:

«Թու էլ ես ասում, որ ալդ անկարելի է»:
— Յոյներն արդէն ծովափ կլինին հասած:
«Ճպի վրայ նոյնպէս կհալտծենք նրանց»:
— «Դի՛մք»:

— Այս ձիով: Եօնասին ուղարկիր ինձ մօտ:
Եօնասը ներկայացաւ խորհրդին:
«Եօնաս բէզ, ալսօր էլ էլը նայում դէպի այն
կողմը, ուր երկինքն ու գետինը միախառնուում են»:
— Այո՞ւ:

«Ալսօր էլ տեսար այն դէմքը, որ աչքիցդ անլալ-
տացաւ, բայց ալնուամենալիւ սաւառնում է հոգուդ-
առաջ»:

— Այո՞ւ, տեսալի:

«Երեք օր ու գիշեր է արդէն, որ նա անլալտա-
ցել է քո աչքից. կարող ես գեռ հասնել նրան»:

— Առանց մի որ և է կասկածիր:

«Եթէ ալդպէս է, հեծիր ձիդ և առաջնորդիր մեզ»:
Չորս հազար արաբացի հեծեալները քրիստոնեա-
ների զգեստներ էին հագել. — Ալդպէս էին ուղևորուում
ուխտագնաց, բարեպաշտ քարաւանները մեծ խմբերով
դէպի հեռաւոր անապատներում ապրող հողագործ մե-
նակեացների բնակավալբերը: Կալէդը սպասեց այն վայր-
կեանին, երբ արևի ժամացուցը ցոյց տուեց այն: Բոպէն,
որ բոպէին ճանապարհ էր ընկել լոյնե՞լ... Իբն երեք
օր առաջ: Երբ ալդ բոպէն անցաւ, նա ասաց Եօնա-
սին. «ալժմ փշել տուր փողը և մինչև նրանց հաս-
նենք, դու կլինես մեր հրամանատարը: Հրամալիք, ա-
ռաջնորդիր և ցոյց տուր մեզ հանգստութեան և կոռւի-
ժամանակը»:

Մի ժամից յետոյ անապատի փոշուց կազմուած ամ-
պերը ծածկել էին հալածողների խումբը: Դրանք միայն
գիշերուայ կարճ ժամերին էին մի փոքր հանգստա-
նում, արևի մալը մտնելուց յետոյ և արևածագից ա-
ռաջ էին աղօթում, իսկ կերակրուում էին՝ թամբի վրայ
նստած:

Լիբանանի ստորոտներում նրանք կորցրին փախս-
տականների հետքերը: Լեռնալին անդունդների խճա-

քարերը և մալրիների թափուող տերևները ծածկում
էին փախստականների հետքերը:

Սակայն Եօնասն այնտեղ ևս գտաւ նրանց հետքը:

Դամասկոսցիներն իրենց հալածող սարակինոսների
ձեռքից ազատուած կլինէին, եթէ այդ հալածող թըշ-
նամիների մէջ չգտնուէր կատաղի սիրով տոգորուած
մի մարդ, որի սիրելուն իրանց հետ էին տանում:

Լիբանանի ճանապարհները, նոյն իսկ փախչողնե-
րի համար անտանելի էին դարձել՝ ընկած ժալուերի և
ահագին քարաժալթերի շնորհիւ:

Արաբացիները կուռում և աշխատում էին, բայց
յետ չէին մնում:

Սակայն ի՞նչ նպատակ ունէր այս ամբողջ քրտնա-
ջան աշխատանքը:

Լեռնաշղթալի միւս կողմն արդէն բանակած էին
հորովէական զօրքերը, որոնցից փախստականները բա-
ւականաչափ օգնութիւն կարող էին ստանալ, Հորիզո-
նում երեսում էին Գաբօլալի և Լաօդիցիալի աշտարակնե-
րը—այնտեղ էր գտնուում վաթսուն հազար մարդուց
քաղկացած յունաց զօրքը. ով պէտք է Թովմասին ու
նրա հետ մնացած մարդկանցը հետևէր մինչև ալդտեղ:

Հարկաւ միայն մի խելագարուած սիրահար: «Ա-
նուամենախիւ մենք պէտք է հասնենք նրանց», ասաց
Եօնասը գանդաղող արաբացիներին և Կալէդը համա-
ձայնութեան նշան արեց: Նա կարիք ունէր հէնց մի
ալդպիսի մարդու, որ դեռ հաւատում է քաջութեան
հրաշագործութեանց: Անտառում պատահեցին նրանք մի
փայտ կոտրողի, որին և հարց ու փորձ արին փախստա-
կանների մասին:

Բախտը յաջողում էր փախստականներին: Յունաց
կալսեր մի հրամանը, որ ճանապարհին հասաւ Թովմա-
սին, պատուիրում էր նրան իսկոյն փոխել ճանապարհը
և դէալի ծովափ ուղելորուել, ուր նրանք պատրաստի
նաւեր կգտնեն:

Պարզ երեսում էր, որ կալսը վախեցել էր, թէ
մի գուցէ փախստականներին տեսնելով՝ Անտիօք քա-

զաքը պաշտպանող գօրքերն իրենց սրտի արիութիւնը կորցնեն:

Գեներալ Թովմասն իւր մարդկանց հետ գտնւում էր ուրեմն ազատ երկնքի տակ, բայց երկիրն արդէն ամբողջապէս թշնամիների ձեռքն էր և ամուր քաղաք-ներով ու բազմաթիւ գօրքերով շրջապատուած:

Հալածողները պէտք է օձի նման սողալին փախստականների յիտելից, ձայն չպէտք է հանէին և աշխատէին, որ իրենց գոյութեան նշանն անգամ չցոյց տան թշնամուն: Ալժմ նրանք ճանապարհորդում էին տւելի գիշերը, քան թէ ցերեկը: Եօնասի տեղագրական ծանօթութիւնը ճակտուագրական հետևանք պիտի ունենար փախստականների համար: Գիշերով, սաստիկ փոթորկի միջոցին նա առաջնորդեց սարակինոսների գօրքերը դէպի Լաօդիցիա և այնքան մօտեցաւ քաղաքին, որ կալծակի լուսով կարելի էր տեսնել պարիսպների վրայի գիշերապահին, մինչդեռ արաբացիք իրանց նիզակների ծալրերը փաթաթեցին շորերով, որպէս սկալութիւն գիշերը փալլիւը չմատանէ իրենց:

Կէս գիշերին նրանք հասան մի խորը հովիտ, որ այնպէս կապեց նրանց ճանապարհը, որ նրանք մըթնումը չէին կարող շարունակել իրանց ուղին և ստիպուած էին ալդտեղ հանգիստ առնել:

Կալէդը պառկեց ծառի տակ և քնեց:

Երբ շարունակ արթուն մնացող Եօնասն արեւածագից առաջ զարթեցրեց նրան, նա բարկացաւ, որ խանգարեցին իրեն և ասաց, որ վատ երազ է տեսնել: Եւ պատմեց, որ երազում ինքը կռուի մէջն էր, բայց իր սուրը ոչոքի վէրք չէր հասցնում և շուշանի ցողունի նման այս ու այն կողմն էր տատանւում իր ձեռքին:

Սա վատ նշան է:

Եօնասը ծիծաղեց այդ խօսքերի վրայ՝ ասելով. «Երազներն անձրւալին եղանակի նշան են և հրամակեց բարձրանալ անտառապատ զառիվալրով: Ոչոք այլևս լուս չունէր փախստականների յետևից հասնելու. նոյն իսկ Կալէդը կորցրել էր լուսը, բայց նա հրամանատարու-

թիւնը լանձնել էր Եօնասին և քանի որ վերջինս ցառած էր հրայալում, իրենք պէտք է հնազանդուէին:

Արդէն կէսօր էր, երբ սարի գագաթը հասան: Կալէդը, որ անմիջապէս Եօնասի լետևից էր գալիս, երբ նշարեց իր առաջը տարածուող տեսարանը, ձեռքբրը գէպ երկինք բարձրացրեց և ակամալ աղաղակեց. «Ալլահ!»:

Մի հրաշալի տեսարան ներկայացաւ նրա տչքի առաջ. փառահեղ դաշտավայրը ծածկուած էր տատանուող արմաւենիների ստուերներով, իսկ դաշտի ալն կողմը տարածւում էր անհուն երկնքի հետ միախառնուող ծովը: Բայց ամենից հրաշալին ալն էր, որ ծովեզրին ծածանուող արմաւենիների տակ տարածուած էին փախտական դամասկոսցիների վրաններ:

Ալստեղ էին հանգստացել նրանք ալդքոն չարչարանքով յի օրերից լետոյ և կարծում էին, թէ արդէն ամենաապահիով վիճակի մէջ են: Նրանց առաջը ծովն էր, որի վրայ տատանուում էին յունական առագաստանաւերը և ծովերին մօտեցրած մակոյկները, որպէս զի հէնց որ մակրնթացութիւնն սկսուի, փախտականներին իրենց մէջն առնեն: Իսկ նրանց լետևը գտնւում էր անտառապատ լեռնաշղթան, իսկ լեռնաշղթալի միւս կողմն երկու ամրացրած քաղաքներ:

Ո՞վ չէր մտածի, թէ հաճելի կլինի այս արմաւենիների տակ հանգստանալը:

Կալէդը սպասեց, մինչև որ ամբողջ զօրքը հաւաքուեց և լետոյ հրամայեց ամենքին ծունկ չոքել և աղօթել: — Ալս ֆանատիկոս ամբոխն ամեն մի լարձակումից առաջ մէջտ աղօթում էր: — Յետոյ իւր մարդկանցը բաժանեց երեք խմբի: Առաջ ընթացների գլխաւոր կարգեց Եօնասին, պահեստի խմբի հրամանատարութիւնն ինքը յանձն առաւ, իսկ Դերարին յանձնարարեց, որ երրորդ խմբով թշնամու նաւակներին տիրանալ:

Առաջին երկու խմբերը միաժամանակ անտառից դուրս գալով՝ լարձակուեցան անդորր բանակած դամասկոսցիների վրայ: Առաջին երկիւղի միջոցին դրանց մի մասը փախաւ գէպի նաւակները, որպէս զի ծովը մըտ-

նելով փախչեն: Դրանք շուտով նաւակներն ափից արձակեցին և չնայելով տեղատւութանը՝ դէսի ծովի խորքը գնացին: Այդ բանը տեսնելով կատաղի Դերաբը, կռիւների խեղկատակը, իրագործեց նաւերին ձիերով հետեւլու համարձակ գաղափարը—մի միտք, որի նմանը չկալ պատերազմական արուեստի պատմութեան մէջ:

Արաբական պատմագիրները խօսում են Ալլահի այն հրաշքի մասին, որ ծովին հրամալեց՝ յունական նաւակների տակից անլալտանալ և ջրի մակերևոյթի վրայ փախուստ տուողներին՝ հեծեալների խմբերի ձեռքն ընկնել: Դերաբի ձիաւորներն իրանց թամբերի վրայ նստած՝ ձեռք բերին յոյների նաւատորմիղը և չժողին, որ մի նաւ անդամ ազատուի իրանց ձեռքից: Մի ժամից յետոյ վրայ հասած մակընթացութիւնն իւր հետ արիւնոտ դիակներ միայն տարսւ:

Երկրորդ խումբը, Եօնասի հրամանատարութեան ներքոյ, աւելի ծանր վիճակէ մէջ էր: Թովմասը և իւր մարդիկն ալլես ժամանակ չգտանց իրանց վայր դրած զէնքերը վերցնելու, բայց դրա փոխարէն մի ուրիշ բանի համար ժամանակ ունեցան: Յուսահատութեան կռիւների մէջ ենք գտնում մենք այս սիրուն մտքի կրկնութիւնը:

Երբ պատերազմողները տեսան, որ իրենցից աւելի զօրեղ թշնամուց յարձակման ենթարկուեցան, միատեղ հաւաքուած կանանց, երեխաների և ծերերի շուրջը մի երեխակ զրջան կազմեցին և իրենց գօտիներից կախուած շղթաները կապեցին իրենց կողքին կանգնողների գօտիներից, որպէս զի իրանցից ոչ մէկը չկարողանալ փախչել, ալլ ստիպուած լինի հէնց կանգնած տեղն ընկնելու: Ալսպէս կանգնած էր այս փոքրիկ խումբը մետաղեալ գօտու նման՝ յարձակուողների դիմաց: Եօնասը էգը մտածում էր կրկնել այստեղ ալն, ինչ որ Արու Օբայդահն արաւ Դամասկոսի առաջ: Կալէդը նրան լիազօրութիւն էր տուել: «Անձնատուր եղէք և կենդանի կմնաք» աղաղակեց նա հեռուից: «Անիծեալ լինիս, ուրացող», պատասխան ստացաւ նա: «Եւդոկսիալին ինձ լանձնեցէք», աղաղակեց նա երկրորդ անգամ և իբրև

սլատասխան միմիալն մի ձալն հնչեց. ալդ ձալնն իւր սիրուհու խօսքն էր. «Անիծեալ լինիս, ուրացող»:

Ալդ ժամանակ կրքեց կուրացած սիրահարը կատաղի ցասմամբ յարձակուեց իւր հաւատակիցների շըզթաղի վրալ և առաջինն էր, որ կտրեց ալդ շղթան: Յոյների խումբը յուսահատութիւնից արիութեամբ էր կուռում, բայց այնուամենայնիւ հետզհետէ փոքրանում էր: Միայն երկու երեք մարդ էին դեռ կուռում Եւդոկահայի շուրջը, բայց գրանք էլ կատաղի սիրահարի ձեռքով գետին գլորուեցան. կանգուն մնաց միայն գեներալ Թովմասը: Բայց ուրացողը նրա մետաղապատ կըրծքի վրալով նոյնպէս ճանապարհ հարթեց դէպի իւր սիրուհին—ալդ ժամանակ աղջիկն ինքը վերցրեց իւր հօրեղքօր գետին ընկած սուրը և անձամբ սկսեց կըռուել իւր նախկին նշանածի հետ: Եօնասը նրա սուրը վայր ձգել տուեց, թռաւ դէպի նա և գրկեց նրան՝ «իմս» ասելով: Բայց Եւդոկսիան գօտիկց դուրս հանելով դաշունը, խըեց իւր սիրահը: Եօնաս ըէգն այժմ ձեռքին բռնած ունէր իւր կուրների վարձատրութիւնը—Եւդոկսիայի դիակը:

Գերմաներէնից թարգմ.

Խահոնկ Յարուբիւնեան

